Արձանագրություն 2

2019թ հունվարի 18-ին տեղի ունեցավ Կոտայքի մարզի Գեղաշեն գյուղի Ռ.Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի *VI*ᴾ դասարանի ծնողական ժողովը դասղեկ Ա.Մուրադյանի գլխավորությամբ:

Օրակարգ

1. Ուսման առաջադիմություն:
2. Կարգապահություն:
3. Հանդերձանք:
4. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին.- Ուսման առաջադիմության հարցը:
Դասղեկ Ար.Մուրադյանը ներկայացրեց *VI*ᴾ դասարանի աշակերտների առաջին կիսամյակի ուսման առաջադիմությունը որը կազմում է 91%:Այս դասարանում սովորում են 6 գերազանցիկներ:

1 Այվազյան Էրիկ Վահագնի
2 Բաղալյան Դավիթ Ռոբերտի
3 Հովհաննիսյան Ռենա Գարիկի
4 Պետրոսյան Ինգա Պետրոսի
5 Կարապետյան Սյուզի Խաչիկի
6 Մաթևոսյան Աստղիկ Նորայրի

Ուսման առաջավորներ

1 Ավագյան Հրայր Վաչագանի
2 Գալստյան Անդրանիկ Սերոբի
3 Գալստյան Աննա Բենիկի
4 Գալստյան Լիանա Բենիկի
5 Սարգսյան Գևորգ Սարգսի
6 Սարգսյան Էլեն Ցոլակի

Հովսեփյան Միերը և Ղազարյան Վաչագանը մեկական առարկաներից ունեն անբավարար գնահատական:

Դասղեկ Ար. Մուրադյանը տեղեկացրեց, որ բոլոր ուսման առաջավորները կարող են էին գերազանցիկ լինել, բայց որոշ առարկաներին ոչ այնքան պատրաստ լինելու պատճառով թերացել են, և դա պետք է շտկել աշակերտների և ծնողների աջակցությամբ:
Որոշեցին.- Ծնողների անվերապահ հսկողությամբ և աշակերտներին քրտնաջան աշխատանքի շնորհիվ պետք է ապահովել ուսման առաջադիմությունը, պետք է լինել շատ աշխատասեր, հետևողական և միշտ պատրաստ:

Լսեցին.- Կարգապահության հարցը:
Դասղեկ Ար. Մուրադյանը ներկայացրեց աշակերտների կարգապահությանը վերաբերող մի շարք հարցեր: Մի քանի աշակերտներ ունեն խնդիրներ, իրար հետ

հաճախ կովում են, վիրավորում(Գալստյան Անդրանիկը , Էրիկը, Հրայրը, Պետրոսը, Վարուժանը): Պետք է աշակերտները լինեն ընկերներ, իրար օգնեն, լինեն համերաշխ և ամենակարևորը՝ ընկերասեր: Մարդկային լավագույն որակների շնորհիվ են հետագայում կարողանում հաղթահարել յուրաքանչյուր խոչընդոտ և ունենում ցանկալի ձեռքբերումներ ու նվաճումներ:

Որոշեցին.- Աշակերտների և ծնողների օգնությամբ վերացնել բոլոր սխալները, լուծելխնդիրները և լինել ավելի հանդուրժող, ընկերասեր և կարգապահ:

3. Լսեցին.-Հանդերձանքի հետ կապված հարցը:
Հանդերձանքի հետ կապված հարցերի մասին ևս խոսեց դասղեկ Ա.Մուրադյանը: Մի քանի աշակերտներ դպրոց են հաճախում երբեմն սպորտային, ոչ դպրոցականին համապատասխան հանդերձանքով:Պետք է աշակերտը միշտ լինի դպրոցական համազգեստով. չէ՞ որ դա ոչ միայն ակնառու է, այլև աշակերտի մեջ յուրաքանչյուր միջավայրին համապատասխան հագուստ կրելու գեղեցիկ ճաշակ զարգացնելու արվեստ:

Որոշեցին.- Համազգեստի հետ կապված հարցերը լուծել առանց հետաձգելու, լինելհետևողական, որպեսի աշակերտը միշտ կրի դպրոցական համազգեստ:

4. Լսեցին.-Ընթացիկ հարցեր:
Դասղեկ Ար.Մուրադյանը խոսեց նաև ընթացիկ հարցերի մասին (դասարանի մաքրում, գրքերի հետ կապված հարցեր, տնայինների կատարում):Նա տեղեկացրեց, որ պետք է շաբաթվա վերջում մի քանի ծնողներ դասարանը մաքրելիս օգնեն:Մի քանի աշակերտներ երբեմն գիրք չեն բերում, տնայինները չեն կատարում, ոմանք էլ ուշանում են հաճախ:

Որոշեցին.-Ծնողները մշտապես հետևեն , որպեսզի աշակերտները բերեն բոլոր գրքերը, տնայինները լինեն կատարված:Յուրաքանչյուր առարկա շատ կարևոր է, պետք կատարել ամենօրյա պահանջվող հանձնարարությունները, որպեսզի դրանք ապահովեն ուսման առաջադիմությունը:

Ժողովի նախագահ՝ Հր.Ավագյան
Քարտուղար՝ Տ.Աբրահամյան